ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.03.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/70

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.03.2021թ. թիվ 26/26-1/3667-2021 գրությամբ «Անտոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 10.03.2021թ. թիվ 01/2844 գրության հիման վրա 15.03.2021թ. թիվ 26/26-1/3667-2021 գրությամբ նախաձեռնել է «Անտոն» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Անտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Անտոն» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/70 ընթացակարգի շրջանակներում 22.03.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 10.03.2021թ. թիվ 01/2844 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք, Ձեզ որ Վանաձորի համայնքապետարանի կողմից 19.02.2021թ. հայտարարված «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ-21/36» ծածկագրով մրցույթի մասնակից՝ «ԱՆՏՈՆ» ՍՊԸ-ն /ՀՎՀՀ 06954533/ ներկայացել է հրավերի պահանջներին անհամապատասխան հայտ՝«ԱՆՏՈՆ» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել իրենց կողմից լրացված և հաստատված ծավալաթերթը:

«ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ-21/36» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.9 կետի համաձայն հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստ, մասնակցին՝առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանություններ: «ԱՆՏՈՆ» ՍՊԸ-ի հայտում արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04 մայիսի 2017թ. Թիվ 526-Ն որոշման VII մասի 45-րդ կետը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը Ձեզ ենք ուղարկում բոլոր փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/70 ընթացակարգի շրջանակներում 22.03.2020թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/70 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/70 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի կողմից իր կարիքների համար Վանաձոր համայնքի գետերի հուների մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ-21/36» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Անտոն» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.02.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Անտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ չի ներկայացվել լրացված և հաստատված ծավալաթերթը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 02.03.2021թ. ժամը 10:00-ն, շտկել անհամապատասխանությունը:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 26.02.2021թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.03.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Անտոն» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չեն շտկվել արձանագրված անհամապատասխանությունները:

8. ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, 10.03.2021թ. թիվ 01/2844 գրությամբ Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, ներկայացրել է լիազորված մարմնին:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 15.03.2021թ. թիվ 26/26-1/3667-2021 գրությունը, ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի 10.03.2021թ. թիվ 01/2844 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսպես, ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի կողմից իր կարիքների համար Վանաձոր համայնքի գետերի հուների մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ-21/36» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Անտոն» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.02.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Անտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ չի ներկայացվել լրացված և հաստատված ծավալաթերթը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 02.03.2021թ. ժամը 10:00-ն, շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 26.02.2021թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.03.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ ***«Անտոն» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չեն շտկվել արձանագրված անհամապատասխանությունները***:

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, ***10.03.2021թ. թիվ 01/2844 գրությամբ Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, ներկայացրել է լիազորված մարմնին:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:***

Կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Պատվիրատուի կողմից ներկայացված փաստաթղթերը, մասնավորապես՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.03.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությունը, հարկ եմ համարում արձանագրել, ***<u>որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Անտոն» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չեն շտկվել արձանագրված անհամապատասխանությունները, այնուհետև, առանց Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխան «Անտոն» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ որոշում կայացնելու, 10.03.2021թ. թիվ 01/2844 գրությամբ Ընկերության տվյալները՝ համապատասխան փաստաթղթերով, ներկայացրել է լիազորված մարմնին՝ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:</u>***

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Անտոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.03.2021թ. թիվ 26/26-1/3667-2021 գրությամբ «Անտոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**